# ՞նչ արժեք ունես Աստծո մոտ
Հրաշալի ողորմութուն (մաս 6)

*«Նա ոչ թե ըստ մեր կատարած արդար գործերի մեզ փրկեց, այլ իր ողորմությամբ, վերստին ծննդյան ավազանի միջոցով և Սուրբ Հոգու նորոգությամբ:»* Տիտոս 3:5

*«Մարդու Որդին եկել է կորածին փնտրելու ու փրկելու»:* Ղուկաս 19:10

Հիսուսը երեք առակների միջոցով բացատրեց իր միտքը.

``Կորսված ոչխարը´´, ``Կորսված ոսկին´´, `` Կորսված որդին´´ (Ղուկ. 15:1-31)

``Կորսվածությունը´´ վերաբերվում է արժեքին

Ի՞նչ եմ կորցնում, երբ ես հոքնորապես ``կորսված եմ´´

Ինչպես կորած ոչխարը...

1. Ես կորցնում եմ իմ ուղղությունը

*«Մենք բոլորս մոլորվեցինք ոչխարների պես, յուրաքանչյուրն իր ճանապարհով գնաց, բայց Տերը նրա վրա դրեց մեր բոլորի անօրենությունը:»* Եսայիա 53:6

2. Ես կորցնում եմ Աստծո պաշտպանությունը

*«Հոտի պես են առաջ շարժվում, տառապում են, որովհետև հովիվ չկա:»* Զաքարիայ 10:2

Ինչպես կորած ոսկին...

3. Ես կորցնում եմ իմ պոտենցիալը

*«Ինչ որ աչքը չտեսավ, ու ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, այն Աստված պատրաստեց իրեն սիրողների համար:»* Ա Կորնթացիս 2:9

Ինչպես կորսված որդին...

4. Ես կորցնում եմ իմ երջանկութունը

*«Եվ երբ ամբողջն սպառեց, այդ երկրում սաստիկ սով եղավ, ինքն էլ սկսեց չքավոր դառնալ:»* Ղուկաս 15:14

* Մեր թափառական բնույթը մեզ հեռացնում է Աստծուց
* Մեր հանգամանքները կարող են մեզ հեռացնել Աստծուց
* Մեր որոշումները հեռացնում են մեզ Աստծուց

5. Ես կորցնում եմ իմ երկնային տունը

*«Քանի որ մարդու համար ի՞նչ օգուտ է, որ այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի կամ վնասվի:»* Ղուկաս 9:25

Բայց ես չեմ կորցնում իմ արժեքը

*«Աստված այնքան սիրեց աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով նրան հավատում է, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա:»* Յովհա 3:16

Ինչպե՞ս է Աստծո ողորմությունը ``փրկում´´ ինձ

1. Փրկությունը ազատում է ինձ՝ ինձանից

*«Քանի որ կա մեկ Աստված և մեկ միջնորդ Աստծու ու մարդկանց միջև՝ Քրիստոս Հիսուս մարդը:»* Ա Տիմոթէոս 2:5

*«Կանչի՛ր ինձ նեղության օրը, ու ես կազատեմ քեզ, և դու կփառաբանես ինձ:»* Սաղմոս 50:15

2. Փրկությունը վերականգնում է իմ պոտենցիալը

*«Ինձ մո՛տ եկեք, բոլո՛ր հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:»* Մատթէոս 11:28

*«Եվ ես ձեզ կհատուցեմ այն տարիները, որ կերան մորեխը.»* Յովէլ 2:25

3. Փրկությունը վերամիավորում է ինձ Աստծո հետ

*«Իսկ եթե մեկը Քրիստոսի մեջ է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ: 18 Ամեն ինչ Աստծուց է, որը մեզ Հիսուս Քրիստոսի միջոցով իր հետ հաշտեցրեց ու մեզ հաշտության ծառայությունը տվեց:»* Բ Կորնթ 5:17-18

Ինչպե՞ս կարող եմ կապվել Աստձո ողորմությանը

1. Կշտանալով իմ կյանքից

*«Մի քանի օր հետո կրտսեր որդին…իր ունեցածը վատնեց՝…սկսեց չքավոր դառնալ…ցանկանում էր իր որովայնը լցնել…և սթափվելով՝ ասաց:»* Ղուկաս 15:13-17

*«Դուք կփնտրեք ինձ ու կգտնեք, երբ ինձ ձեր ամբողջ սրտով կորոնեք:»* Երեմիա 29:13

2. Ընդունելով իմ մեղքերը

*Եվ սթափվելով՝ ասաց. "Հա՛յր, մեղանչեցի երկնքի ու քո առաջ:»* Ղուկ 15:17-18

3. Նվիրելով իմ անձը

*«Նրանցից կրտսերը հորն ասաց. "Հա՛յր, տո՛ւր ինձ ունեցվածքիցդ ինձ հասնող բաժինը":»* Ղուկաս 15:12

*«ինձ քո վարձկաններից մե՛կն արա":»* Ղուկաս 15:19

Հոր պատասխանը

*«Ու երբ նա դեռ հեռու էր, հայրը նրան տեսավ և գթաց. վազեց, նրա վզովն ընկավ ու համբուրեց նրան:»* Ղուկաս 15:20

Հաջորդ Կիրակի
«Ծառայություն ողորմությամբ»
Հովիվ Սարօ Խաչիկեան